

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի հակակոռուպցիոն բաղադրիչի վերաբերյալ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերի հակակոռուպցիոն բաղադրիչի վերաբերյալ

Սույն փաստաթուղթն ամփոփ ներկայացնում է ՀՀ Ազգային ժողովի 2026 թ. հունիսի 7-ի հերթական ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող խոստումները:

Ուսումնասիրության հիմքում ընկած են ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում օրենքով սահմանված կարգով հրապարակված նախընտրական ծրագրերը:

2026 մայիսի 21-ի դրությամբ պարզվել է, որ 19 քաղաքական ուժերից միայն 10-ն ունեն նախընտրական ծրագիր: Դրանցից 8-ն են անդրադարձել կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերին, ինչպիսիք են՝ կոռուպցիայի կանխարգելման մեխանիզմները, թափանցիկության և հաշվետվողականության միջոցները, ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ դրույթները:

Քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում ներկայացված հակակոռուպցիոն բաղադրիչի բովանդակությունը էականորեն տարբերվում է: Մի շարք քաղաքական ուժեր սահմանափակվում են ընդհանուր հայտարարություններով, սակայն չեն ներկայացնում կոնկրետ գործիքներ և ինստիտուցիոնալ մեխանիզմներ: Մյուսները ներկայացնում են ավելի համակարգային մոտեցումներ:

Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի հարցը քաղաքական ուժերի նախընտրական ծրագրերում գրեթե չի արտացոլվում: Այս ուղղությամբ կոնկրետ հանձնառություն ներկայացրել է միայն մեկ կուսակցություն, մինչդեռ այլ քաղաքական ուժերի ծրագրերում այս հարցը բացակայում է:

Իրենց ծրագրերում հակակոռուպցիոն դրույթներ ներառել են հետևյալ 8 քաղաքական ուժերը.

- «Ուժեղ Հայաստան» դաշինք, N 3
- «Միասնության թևեր» կուսակցություն, N 6
- «Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն, N 8
- «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն, N 10
- «Հանրապետություն» կուսակցություն, N 11
- «Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն, N 14
- «Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն N 15
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, N 16

«Ուժեղ Հայաստան» դաշինք (N 3)

Ծրագիրը (էջեր 50, 56, 58-62) նախատեսում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության բարձրացում: Ծրագրում նաև ընդգրկված են դատական իշխանության բարեփոխման վերաբերյալ առաջարկներ, որոնք նպատակ ունեն ապահովել դատարանների անկախությունը, արդյունավետությունը և արդարադատության նկատմամբ հանրային վստահության բարձրացումը: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ դրույթներ նախատեսված չեն:

«Միասնության թևեր» կուսակցություն (N 6)

Ծրագրում (էջեր 8-9, 21, 33) շեշտադրվում են պետական կառավարման բարելավումը, օրինականության ամրապնդումը և կոռուպցիայի դեմ պայքարը: Նշվում է, որ Հայաստանը պետք է ունենա իրական հակակոռուպցիոն համակարգ, որի հիմքում կլինեն թվային տեխնոլոգիաների վրա հիմնված ընթացակարգեր և ինստիտուտներ, ինչպես նաև հանրային արդյունավետ վերահսկողություն: Կուսակցությունը նախատեսում է պետական գնումների համակարգում ներդնել թվային դրամի կիրառություն, ինչը ներկայացվում է որպես գործարքների թափանցիկության և հետագծելիության բարձրացման միջոց: Ծրագրում նաև շեշտադրվում է հանրային կառավարման համակարգի բարեփոխումը և դատական իշխանության իրական անկախության ապահովումը, որոնք դիտարկվում են որպես կոռուպցիայի կանխարգելման հիմնարար նախապայմաններ: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ առանձին և հստակ դրույթներ ծրագրում նախատեսված չեն:

«Ազգային-ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցություն (N 8)

Ծրագիրը (էջեր 2, 5) հակակոռուպցիոն քաղաքականության համատեքստում նախատեսում է համապարփակ անցումային արդարադատության իրականացում՝ հիմնված իրավաքաղաքական գնահատականի և պատասխանատվության սկզբունքների վրա: Որպես հիմնական գործիքներ նշվում են ժամանակավոր դատական մարմինների ձևավորումը, լյուստրացիայի իրականացումը, ինչպես նաև պատերազմի և վերջին իրադարձությունների համապարփակ քննությունը: Միաժամանակ ծրագրում հստակեցված չեն անցումային արդարադատության շրջանակները, թիրախային խմբերը, կիրառվելիք ընթացակարգերը: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ ծրագրում առանձին դրույթ նշված չէ:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն (N 10)

Ծրագրում (էջեր 13-14) շեշտադրվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարը պետք է իրականացվի ոչ միայն պատժիչ միջոցներով, այլև կոռուպցիայի առաջացման նախադրյալների և պետական կառավարման համակարգային թերությունների վերացման միջոցով: Այս նպատակով առաջարկվում են մի շարք կոնկրետ գործիքներ՝ քաղաքացի–պաշտոնյա անմիջական շփման նվազեցում, ապանձնավորված որոշումների կայացման մեխանիզմների ներդրում, ալգորիթմների և ավտոմատացված ընթացակարգերի կիրառում, «ինքնաշխատ դրական պատասխանի» սկզբունքի ներդրում, ավելորդ կարգավորումների վերացում և պետական ծառայության մեջ մերիտոկրատիկ

նշանակումների ապահովում: Ծրագիրը նախատեսում է, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի շրջանակում կառավարությունը կհամագործակցի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ ծրագրում առանձին դրույթներ նախատեսված չեն:

«Հանրապետություն» կուսակցություն (N 11)

Ծրագրում (էջեր 2, 3) հակակոռուպցիոն բաղադրիչն ուղղակիորեն և առանձին բաժնով ներկայացված չէ: Միաժամանակ, արդարադատության ոլորտում նախատեսվում են մի շարք բարեփոխումներ, այդ թվում՝ դատական համակարգում երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրում, դատավորների և նրանց աշխատակազմերի թվի ավելացում, ինչպես նաև արդարադատություն իրականացնող մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության ուժեղացում, որոնք կարող են անուղղակիորեն նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, պետական կառավարման հաշվետվողականության բարձրացմանը և արդարադատության համակարգի արդյունավետության ամրապնդմանը: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ առանձին և հստակ դրույթներ ծրագրում նախատեսված չեն:

«Ժողովրդավարական համախմբում» կուսակցություն (N 14)

Ծրագրում (էջ 12) հակակոռուպցիոն բաղադրիչն ուղղակիորեն առանձնացված չէ, սակայն ներառված են մի շարք համակարգային դրույթներ, որոնք կարող են էականորեն նպաստել կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, ծրագիրը նախատեսում է բյուրոկրատական համակարգում մերիտոկրատական սկզբունքների ներդրում և պետական ապարատի ապակուսակցականացում: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ առանձին դրույթներ նախատեսված չեն:

«Դեմոկրատիա Օրենք Կարգապահություն» կուսակցություն (N 15)

Ծրագրում (էջեր 2, 3, 5-15) շեշտադրվում են պետական կառավարման թափանցիկության բարձրացումը, պետական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը, դատական և իրավապահ համակարգերի բարեփոխումները, ինչպես նաև կոռուպցիոն վարքագծի կանխարգելումը: Նշվում է, որ Եվրոպական միության հետ համագործակցության շրջանակում առաջնահերթ նշանակություն ունեն հակակոռուպցիոն ինստիտուտների զարգացումը, իրավական պետության ամրապնդումը և անկախ դատական համակարգի կայացումը: Ապօրինի ծագում ունեցող գույքի վերադարձի վերաբերյալ ծրագրում առանձին և հստակ դրույթներ նախատեսված չեն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (N 16)

Ծրագրում (էջ 23) նախատեսվում է շարունակել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացումը, զարգացնել պետական պաշտոնյաների բարեվարքության գնահատման համակարգը, կատարելագործել հայտարարագրման մեխանիզմները, բարձրացնել հանրային գնումների թափանցիկությունը, խորացնել պետական ֆինանսների

թվայնացումը և ուժեղացնել հակակոռուպցիոն ինստիտուտների կարողությունները: Ծրագրում նաև նախատեսվում է շարունակել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացը:

Ռեֆորմիստների կուսակցության և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կողմից հրապարակված նախընտրական ծրագրերը չեն անդրադառնում կոռուպցիային առնչվող հարցերին:

Հետևյալ 9 կուսակցություններն առհասարակ չեն ներկայացրել նախընտրական ծրագիր.

- «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական կուսակցությունը
- Հայաստանի շնորհապետական կուսակցությունը
- «Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցությունը
- «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք» կուսակցությունը
- Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը
- «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունը
- «Հայաստան» կուսակցությունների դաշինքը
- «Հանուն հանրապետության» ժողովրդավարության պաշտպանների դաշինք կուսակցությունը
- «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը